

## ԻՐԱՎԱԿԱՆ ԽՆԴԻՐ

### ՔՐԵԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՄԱՆ ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ՀԱՎԱԿՆՈՐԴՆԵՐԻ ՑՈՒՑԱԿԸ ՀԱՄԱԼՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՆՑԿԱՑՎՈՂ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԳՐԱՎՈՐ ՔՆՆՈՒԹՅԱՆ (ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ)

2017 թվականի հոկտեմբերի 16-ին նախաքննության մարմնի կողմից ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով հարուցվել է թիվ 12798717 քրեական գործը այն փաստի առթիվ, որ անհայտ անձը դանակով հարվածել և Արտյոմ Երեմի Գևորգյանի առողջությանը պատճառել է ծանր մարմնական վնասվածք:

2017 թվականի հոկտեմբերի 17-ին որպես վկա հարցաքննության ժամանակ Լևոն Գևորգի Պետրոսյանը հայտնել է, որ ինքը գտնվել է տանը, երբ լսել է բարձր աղմուկ, սեռական բնույթի հայհոյանքներ: Երբ դուրս է եկել բակ, նկատել է մի անծանոթ տղամարդու, որը հետագայում պարզվել է, որ Արտյոմ Երեմի Գևորգյանն է, վիրավոր, գրեթե անգիտակից վիճակում, արյունահոսելիս և նրան օգնել է՝ տեղափոխելով հիվանդանոց, ինչպես նաև ահազանգել է ոստիկանություն: Բացի այդ, հայտնել է, որ հիվանդանոցի ճանապարհին Ա.Գևորգյանը, երբ ուշքի է եկել, իրեն պատմել է, որ իրեն հարվածողը Արմեն անունով մի երիտասարդ է եղել, որի հետ վեճի է բռնվել ավտոմեքենան ավտոտնակի դիմաց կայանելու պատճառով:

2017 թվականի հոկտեմբերի 19-ին ստացված դատաբժշկական եզրակացության համաձայն՝ Արտյոմ Երեմի Գևորգյանը ստացած վնասվածքը կրծքավանդակի աջ կողմնային մակերեսին ծակած-կտրած, թոքի վնասումով, թափանցող վերքի ձևով է՝ զուգակցված պնևմոհեմորաքսով, որի արդյունքում նրա առողջությանը պատճառվել է ծանր վնաս՝ կյանքին վտանգ սպառնացող:

ՀՀ ոստիկանության Նոր Նորքի բաժնից 2017 թվականի հոկտեմբերի 22-ին ստացվել է գրություն, որ ձեռնարկված օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում պարզվել է, որ Ա.Գևորգյանին ծանր մարմնական վնասվածքներ հասցրած անձը Արմեն Գևորգի Պետրոսյանն է, ով նույն քրեական գործով որպես վկա հարցաքննված Լ.Պետրոսյանի եղբայրն է:

2017 թվականի հոկտեմբերի 22-ին Ա.Պետրոսյանը ներգրավվել է որպես մեղադրյալ ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով այն արարքի համար, որ նա 2017 թվականի հոկտեմբերի 16-ին կենցաղային հողի վրա ծագած վիճաբանության ընթացքում սեռական բնույթի հայհոյանքներ է տվել և դանակով մեկ անգամ հարվածել է Արտյոմ Երեմի Գևորգյանին՝ նրա առողջությանը պատճառելով կյանքին վտանգ սպառնացող ծանր վնաս:

Քննիչ Ա.Գեղամյանը մեղադրյալ Ա.Պետրոսյանին հայտնաբերելու և քննությանը ներկայացնելու ուղղությամբ հանձնարարություններ է տվել ՀՀ ոստիկանության Նոր Նորքի բաժնին, կայացնում է բերման ենթարկելու մասին որոշում, սակայն ստացվել է պատասխան

գրություն, որ Ա.Պետրոսյանին հայտնաբերել հնարավոր չի եղել, քանի որ վերջինս բացակայել է իր մշտական բնակության վայրից, իսկ գտնվելու վայրը հայտնի չէ:

2017 թվականի հոկտեմբերի 24-ին որպես վկա հարցաքննության ժամանակ Լևոն Գևորգի Պետրոսյանը հայտնել է, որ հրաժարվում է ցուցմունք տալուց, քանի որ իր ցուցմունքները կարող են օգտագործվել իր եղբոր՝ Ա.Պետրոսյանի դեմ, որի մեղադրյալ ներգրավված լինելու, ինչպես նաև քրեական գործի հետ որևէ առնչություն ունենալու մասին ինքը նոր է տեղեկացել:

2017 թվականի հոկտեմբերի 24-ին Ա.Պետրոսյանի նկատմամբ հայտարարվել է հետախուզում, իսկ 2017 թվականի հոկտեմբերի 25-ին Դատարանը բավարարել է քննիչ Ա.Գեղամյանի՝ Ա.Պետրոսյանի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց երկու ամսով ընտրելու վերաբերյալ միջնորդությունը:

2017 թվականի նոյեմբերի 1-ին որպես տուժող հարցաքննության ժամանակ Ա.Գևորգյանը հայտնում է, որ չի հիշում, թե ինչ հանգամանքներում է ստացել իր մարմնական վնասվածքը, քանի որ դրանից հետո բավականին արյուն է կորցրել, ունենալով նաև հիշողության խանգարումները: Չի կարող նկարագրել, սակայն տեսնելու դեպքում հնարավոր է և ճանաչի իրեն մարմնական վնասվածք հասցրած անձին:

2018 թվականի հունվարի 6-ին Ա.Պետրոսյանը հայտնաբերվում է և նույն օրը նրան առաջադրվում է մեղադրանք ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով: Որպես մեղադրյալ հարցաքննության ժամանակ վերջինս հրաժարվում է ցուցմունք տալուց:

2018 թվականի հունվարի 7-ին քննիչ Ա.Գեղամյանի միջնորդության քննության արդյունքում Երևան քաղաքի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը Ա.Պետրոսյանի նկատմամբ ընտրված խափանման միջոց կալանավորումը վերահաստատում է՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ վերջինս գտնվել է հետախուզման մեջ և հավանականությունը, որ նա կարող է թաքնվել վարույթն իրականացնող մարմնից, իսկ հետագայում խուսափել քրեական պատասխանատվությունից, իսկ ինչ վերաբերում է պաշտպանության կողմի փաստարկներին առ այն, որ մեղադրյալը պատշաճ ծանուցված չի եղել, ապա այդ հանգամանքն ինքնին չի կարող բավարար լինել:

2018 թվականի հունվարի 10-ին փաստաբան Գ.Լևոնյանը, ներկայանում է քննիչ Ա.Գեղամյանին և հայտնում, որ մեղադրյալ Ա.Պետրոսյանի շահերը ներկայացնելու համար իրեն լիազորել է նրա ընկերը՝ Հ.Սիմոնյանը, ուստի միջնորդում է ապահովել իր մասնակցությունը, ինչպես նաև տրամադրել մինչդատական վարույթի տվյալ փուլում պաշտպանության կողմին հասանելի փաստաթղթերի պատճենները: Քննիչ Ա.Գեղամյանը մերժում է ներկայացված միջնորդությունը՝ պատճառաբանելով, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 70-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն անհրաժեշտ է մեղադրյալի համաձայնությունը, քանի որ փաստաբանին հրավիրել է այլ անձ, իսկ նման համաձայնությունը բացակայում է:

Փաստաբան Գ.Լևոնյանը որպես Ա.Պետրոսյանի պաշտպան ներգրավվում է 2018 թվականի փետրվարի 6-ին, երբ կատարվում է առերես հարցաքննություն նրա և Լ.Պետրոսյանի միջև, որի ժամանակ վերջիններս հրաժարվում են ցուցմունք տալուց:

2018 թվականի մարտի 5-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևան քաղաքի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան:

Գործի դատական քննության ընթացքում տուժող Ա.Գևորգյանը պնդում է իր նախաքննական ցուցմունքները և խնդրում դատարանից քրեական պատասխանատվության ենթարկել հանցանք կատարած անձին, ինչպես նաև ներկայացնում է քաղաքացիական հայց՝ իրեն պատճառված նյութական՝ 500.000 ՀՀ դրամի չափով (դատարանին որպես ապացույց ներկայացվում է վիրահատության համար վճարված 500.000 ՀՀ դրամի անդորրագիրը), և իր հասցեին արված սեռական բնույթի հայհոյանքների համար ոչ նյութական (բարոյական)՝ 200.000 ՀՀ դրամի չափով վնասի հատուցման պահանջների մասին:

Վկա Լ.Պետրոսյանը հրաժարվում է ցուցմունք տալուց՝ պատճառաբանելով, որ իր ցուցմունքները կարող են օգտագործվել իր եղբոր դեմ: Դատարանը հրապարակում է վերջինիս նախաքննական ցուցմունքները:

Ամբաստանյալ Ա.Պետրոսյանը ցուցմունք է տալիս առ այն, որ ինքն իրեն մեղավոր չի ճանաչում, սակայն խնդրում է դատարանից իր նկատմամբ մեղմ վերաբերվել և մեղավոր ճանաչելու դեպքում նշանակել օրենքով սահմանված նվազագույն պատիժ: Ինչ վերաբերում է ներկայացված քաղաքացիական հայցին, ապա մեղավոր ճանաչվելու դեպքում պատրաստակամ է ամբողջությամբ հատուցելու դրանք:

Գործի դատական քննության ընթացքում հետազոտվում են նաև դատաբժշկական փորձաքննության եզրակացությունը, իրեղեն ապացույց ճանաչված դանակը:

Երևան քաղաքի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը 2018 թվականի հուլիսի 9-ին կայացնում է մեղադրական դատական ակտ, Ա.Պետրոսյանին մեղավոր է ճանաչում ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքում՝ նշանակելով ազատազրկման ձևով պատիժ՝ 3 տարի ժամկետով, միևնույն ժամանակ բավարարում է ներկայացված քաղաքացիական հայցն ամբողջությամբ:

2018 թվականի հուլիսի 12-ին պաշտպան Գ.Լևոնյանը ստանում է դատավճռի երկու օրինակ, որոնցից մեկը պարտավորվում է տրամադրել իր պաշպանյալ Ա.Պետրոսյանին: 2018 թվականի օգոստոսի 29-ին Ա.Պետրոսյանը բողոքարկում է մեղադրական դատավճիռը ՀՀ վերաքննիչ քրեական դատարան՝ խնդրելով հարգելի համար վերաքննիչ բողոք բերելու բաց թողնված ժամկետը, քանի որ դատական ակտն իր պաշտպան Գ.Լևոնյանն իրեն տրամադրել է 2018 թվականի օգոստոսի 8-ին: ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը վերաքննիչ բողոք բերելու բաց թողնված ժամկետը հարգելի համարելու վերաբերյալ միջնորդությունը մերժում է, իսկ վերաքննիչ բողոքը թողնում է առանց քննության:

**ՀԱՐՅԵՐ**

### **ՀԱՐՑ 1**

Գնահատեք քննիչ Ա.Գեղամյանի կողմից Գ.Լևոնյանի միջնորդությունը մերժելու մասին որոշման իրավաչափությունը:

### **ՀԱՐՑ 2**

Գնահատեք Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի 2018 թվականի հունվարի 7-ի՝ կալանքը վերահաստատելու վերաբերյալ որոշման իրավաչափությունը:

### **ՀԱՐՑ 3**

Գնահատեք մեղադրական դատական ակտ կայացնելու մասով դատարանի հետևությունները, մեկ առ մեկ գնահատման առարկա դարձրեք ներկայացված ապացույցները. դրանցից որոնք կարող են դրվել դատավճռի հիմքում և որոնք չեն կարող դրվել:

### **ՀԱՐՑ 4**

Գնահատեք քաղաքացիական հայցի բավարարման մասով դատարանի հետևությունները:

### **ՀԱՐՑ 5**

Գնահատեք ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի հետևությունները՝ վերաքննիչ բողոք բերելու բաց թողնված ժամկետը հարգելի համարելու վերաբերյալ միջնորդությունը մերժելու և վերաքննիչ բողոք առանց քննության թողնելու մասով: